ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 մարտի 2024 թվականի N 350 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2346-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման մասին» N 2346-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման՝

ա. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Գնահատող հանձնաժողովին՝ մինչև 2024 թվականի մարտի 14-ն ապահովել օրենքի և ՊՄԳ ընթացակարգի համաձայն և սույն որոշման 7-րդ կետով սահմանված պահանջին համապատասխան ծրագրի՝ մասնավոր գործընկերոջ

ընտրության ընթացակարգի որակավորման փուլի հայտարարության հաստատումը, հրապարակումը, տարածումը և շուկայի հնարավոր մասնակիցներին ծանուցումը: Սահմանել, որ որակավորման հայտերի ներկայացման ժամկետը չի կարող գերազանցել որակավորման հարցման հրապարակման օրվան հաջորդող 30 (երեսուն) օրացուցային օրը:»,

բ. 7-րդ կետի «հակասությունների» բառից հետո լրացնել «այդ թվում՝ թարգմանչական տարբերությունների,».

2) Որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետով հաստատված 3.2 հավելվածի՝

ա. 2.6.1 կետի «և Կառավարության կողմից հաստատված՝ Գնահատող Հանձնաժողովի առանձին ընթացակարգային կանոններում» բառերը հանել,

բ. 3.1.4 կետի (c) ենթակետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Թեկնածուն պետք է պատրաստի և ARMEPS-ում ներբեռնված իր Որակավորման Հայտի բնօրինակ էլեկտրոնային տարբերակի պահուստային կրկնօրինակը ներկայացնի էլեկտրոնային փոստի միջոցով Տեղեկատվական Թերթիկում նշված՝ Գնահատող Հանձնաժողովի գաղտնագրված էլեկտրոնային փոստին: Որակավորման Հայտի այս պահուստային էլեկտրոնային կրկնօրինակի ապագաղտնագրումը պետք է տրամադրվի միայն 4.4.3 կետում նշված հատուկ դեպքում: Տարընկալումներից խուսափելու համար՝ Որակավորման Հայտի պահուստային էլեկտրոնային կրկնօրինակի ապագաղտնագրում չպետք է տրամադրվի 4.4.3 կետում նշվածներից բացի այլ որևէ հանգամանքներում (ներառյալ նախքան Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը):»,

գ. 4.1.1 կետի «յոթանասուն (70)» բառերը փոխարինել «երեսուն (30)» բառերով,

դ. 4.4.2 կետի (b) ենթակետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գնահատող Հանձնաժողովը պետք է ARMEPS-ի միջոցով ներկայացված Որակավորման Հայտի պահուստային էլեկտրոնային տարբերակի գաղտնագրված էլեկտրոնային հաղորդագրությունը՝ բացի միայն այն դեպքում, երբ

Գնահատող Հանձնաժողովն ի վիճակի չէ ARMEPS-ի ֆունկցիոնալությամբ պայմանավորված տեխնիկական պատճառներով բացել ARMEPS-ի միջոցով ներկայացված Որակավորման Հայտերի բնօրինակները 4.4 կետով անցկացված նիստում: Այս դեպքում՝

(a1) Թեկնածուն պետք է անհապաղ Գնահատող Հանձնաժողովի քարտուղարին տրամադրի ապագաղտնագրում՝ ARMEPS-ի միջոցով իր ներկայացրած Որակավորման Հայտի գաղտնագրված պահուստային էլեկտրոնային տարբերակին մուտք գործելու համար, և

(b1) համարժեք Թեկնածուի գաղտնագրված էլեկտրոնային փոստում պարունակվող Որակավորման Հայտի պահուստային էլեկտրոնային տարբերակը պետք է համարվի ARMEPS-ի միջոցով ներկայացված Որակավորման Հայտի բնօրինակ՝ Ընտրության Ընթացակարգի հետագա գործընթացի համար:»,

ե. «Հավելված 1. Տեղեկատվական թերթիկ»-ի «Որակավորման Հրավերի հետ կապված հաղորդակցության նպատակներում իրավասու պաշտոնյաներ» տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ.

«	**Հայտի պահուստային գաղտնագրված կրկնօրինակի ներկայացման համար էլեկտրոնային փոստ՝ ARMEPS համար նախատեսված Որակավորման Հայտերի դեպքում**	passidppp@mia.gov.am »

զ. «Հավելված 1. Տեղեկատվական թերթիկ»-ի «Մեկ (1) էլեկտրոնային կրկնօրինակ գաղտնագրված էլեկտրոնային փոստով» բառերը փոխարինել «Մեկ (1) էլեկտրոնային կրկնօրինակ գաղտնագրված էլեկտրոնային փոստով հետևյալ հասցեին ուղարկելու համար՝ passidppp@mia.gov.am» բառերով,

է. «Հավելված 1. Տեղեկատվական թերթիկ»-ի «[Հստակեցման ենթակա])» բառերը փոխարինել «12 Ապրիլ 2024, 16:00 (Երևանի ժամանակով), Երևան» բառերով,

ը. «Հավելված 2. Կողմնորոշիչ ժամանակացույց»-ի «Հայտարարության Ամսաթիվ + 70 օր» բառերը փոխարինել «Հայտարարության Ամսաթիվ + 30 օր» բառերով,

թ. «Հավելված 3. Ծրագրի հիմնական դրույթներ»-ի Աղյուսակ Ա-ի «Նախատես-ված քանակական (10-նամյա գործառնական փուլ)» բառերը փոխարինել «Նախատեսված քանակական (11-ամյա գործառնական փուլ)» բառերով,

ժ. «Հավելված 5. Որակավորման չափանիշներ»-ի 2.1 կետի (c) ենթակետի «եվրոպական կանոնակարգի» բառերը փոխարինել «միջազգային ստանդարտների» բառերով,

ժա. «Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն»-ի 1.1 կետի (e) ենթակետի «երեսուն (30)» բառերը փոխարինել «վաթսուն (60)» բառերով,

ժբ. «Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն»-ի 1.1 կետի (f) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «(f) հաշվեկշիռ (հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին) վերջին ամբողջական օրացուցային տարվա համար՝ տրված որակավորման հայտը ներկայացնելուց ոչ շուտ, քան վաթսուն (60) օր առաջ (Form A),»,

ժգ. «Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն»-ի 1.2 կետի (e), (f) ենթակետերի «Լեզվով» բառերից հետո լրացնել «, տրված որակավորման հայտը ներկայացնելուց ոչ շուտ, քան վաթսուն (60) օր առաջ բառերը, իսկ (e) ենթակետի «Թեկնածուի քարտուղարի» բառերից հետո լրացնել «կամ լիազորված այլ անձի» բառերը,

ժդ. «Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն»-ի 1.3 կետի (h) ենթակետի «երեսուն (30)» բառերը փոխարինել «վաթսուն (60)» բառերով, (i) ենթակետի «30» բառերը փոխարինել « վաթսուն (60)» բառերով, իսկ (e) ենթակետի «Լեզվով» բառից հետո լրացնել «, տրված որակավորման հայտը ներկայացնելուց ոչ շուտ, քան վաթսուն (60) օր առաջ,»,

ժե. «Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն»-ի 1.3 կետի (f) ենթակետի «Կոնսորցիումի անդամի քարտուղարի» բառերից հետո լրացնել «կամ լիազորված այլ անձի» բառերը, ինչպես նաև «Լեզվով» բառից հետո լրացնել «, տրված որակավորման հայտը ներկայացնելուց ոչ շուտ, քան վաթսուն (60) օր առաջ,» բառերը,

ժզ. «Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն»-ի «Form C» ձևաթղթի վերնագրից հանել «ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» բառերը, իսկ 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« 1. Տեղեկություններ Թեկնածուի / Կոնսորցիումի անդամի մասին

Անուն

Տեսակը (ընկերություն, ընկերակցություն և այլն).

Առևտրային գրանցման մանրամասները (գրանցման համարը, ամսաթիվը, վայրը, լիազորությունը և այլն).

Հիմնադրման երկիր.

Գտնվելու վայր.

Գլխավոր գրասենյակի հասցե.

Ղեկավար պաշտոնյաներ (լրիվ անվանում, ID, պաշտոն).

Հեռախոսահամար.

Ֆաքսի համար (առկայության դեպքում).

Էլեկտրոնային փոստի հասցե.

Գործունեության հիմնական ոլորտներ.

Կարգավորվող շուկան, որտեղ ընկերությունը գրանցված է (ցուցակված կազմակերպությունների համար)

Թեկնածուի / Առաջատար անդամի այն բաժնետերերի (մասնակիցների) ընթացիկ ցուցակը, որոնց պատկանում է վերջինիս կանոնադրական կապիտալի ավելի քան 1%-ը

[ներառել համապատասխան ցուցակը]

Թեկնածուի / Առաջատար անդամի, ինչպես նաև վերջիններիս Փոխկապակցված ընկերությունների իրական շահառուների ցուցակը

[ներառել համապատասխան ցուցակը]

Թեկնածուի/ Առաջատար անդամի

Թեկնածուի / Առաջատար անդամի բաժնեմասնակցության կառուցվածքը գծապատկերի (նկարի) տեսքով, որը ցույց է տալիս վերջինիս կանոնադրական կապիտալում ձայնի իրավունքի կամ բաժնետոմսերի (բաժնետոմսերի) 5%-ը կամ ավելին ունեցող անձանց.»,

ժէ. «Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն»-ի «Form C» ձևաթղթի 4-րդ կետից հետո լրացնել 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

« 5. Հավաստում Փոխկապակցված Ընկերությունների վերաբերյալ.

Այն դեպքում, երբ Թեկնածուն/Առաջատար Անդամն ունի 10-ից ավելի փոխկապակցված ընկերություններ, նման Թեկնածուն/Առաջատար Անդամը կարող է լրացնել այս Form C-ն հետևյալ կերպ.

• նշե՛ք փոխկապակցված ընկերությունների ընդհանուր թիվը սույն Form C -ում.

• սույն Form C-ում տրամադրել պահանջվող տեղեկատվությունը մինչև 10 առավել նշանակալի փոխկապակցված ընկերությունների մասին («առավել նշանակալի» են համարվում այն փոխկապակցված ընկերությունները, որոնցում Թեկնածու/ Առաջատար Անդամ ընկերությունն ունի առնվազն 50% + 1 ձայնի իրավունք).

• կցե՛ք լիազորագիր սույն Form C-ին (ըստ Form C1-ի), որը հաստատում է, որ Թեկնածու/Առաջատար Անդամի նման փոխկապակցված ընկերություններից որևէ մեկը ներգրավված չէ Ընտրության ընթացակարգում սույն ՈՀ-ի պահանջների խախտմամբ:

Տարընկալումներից խուսափելու համար այս դեպքում Form C-ն պետք է լրացվի՝ նշելով դրանում պահանջվող մնացած բոլոր տեղեկությունները:»,

ժը. «Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն»-ը լրացնել նոր «Form C1» ձևաթղթով՝ համաձայն հավելված 1-ի,

ժթ. «Հավելված 6. Որակավորման հայտի բովանդակություն»--ում 1.2 կետի (e) ենթակետի և 1.3 կետի (f) ենթակետի վերաբերյալ լրացնել հետևյալ նույն ծանոթագրությունը. «**Ծանոթագրություն.** Իրավական դրական համբավը հաստատող փաստաթուղթը վերաբերում է իրավաբանական անձի վերաբերյալ տրված պաշտոնական փաստաթղթին, որը հաստատում է, որ տվյալ իրավաբանական անձը գոյություն ունի և վերջինիս օրենքի հիման վրա թույլատրվում է գործարարությամբ զբաղվել համապատասխան պետության օրենսդրության ներքո: Սույն փաստաթղթի հատուկ բովանդակությունը, ձևը և տրամադրման կարգը կարող են տարբեր լինել՝ կախված կիրառելի օրենսդրության պահանջներից: Դրական համբավի վերաբերյալ փաստաթղթերը սովորաբար տրվում են լիազորված պետական մարմինների կողմից: Որպես այլընտրանք՝ դրական համբավի փաստաթուղթ կարող է տրվել նաև

կազմակերպության կորպորատիվ քարտուղարի կամ այլ կորպորատիվ մարմնի կողմից, որն իրավասու է ստուգելու և հաստատելու նման կազմակերպության դրական համբավի տվյալները:»,

ի. «Հավելվածի 6. Որակավորման հայտի բովանդակություն»-ի «Form C» ձևաթղթում 4-րդ կետի վերաբերյալ լրացնել հետևյալ ծանոթագրությունը. «**Ծանոթագրություն**. Հնարավոր է կամ տրամադրել մեկ Form C Կոնսորցիումի բոլոր անդամների համար՝ նշելով Առաջատար անդամի և Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի մասին պահանջվող տեղեկատվությունը, կամ առանձին Form C Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի համար: Երկու դեպքում էլ Form C(եր)ը պետք է ստորագրվի Առաջատար անդամի կողմից, որը պետք է լիազորված լինի ներկայացնելու Որակավորման Հայտը և բոլոր փաստաթղթերը, որոնք նման Որակավորման Հայտի մաս են կազմում ամբողջ Կոնսորցիումի անունից: Կոնսորցիումի այլ անդամներից լրացուցիչ ստորագրություններ կարող են (բայց պարտադիր չէ) ավելացվել Կոնսորցիումի կողմից ներկայացված Form C(եր)ին:».

3) Որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետով հաստատված 3.1 հավելվածի.

ա. 2.6.1 կետի «, and separate rules of procedure of the Evaluation Commission approved by the Government» բառերը հանել,

բ. 3.1.4 կետի (c) ենթակետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Candidate shall prepare and submit the back-up copy of the original electronic version of its Qualification Bid downloaded to ARMEPS via the encrypted email to the email address of the Evaluation Commission indicated in the Data Sheet. The de-encryption for this back-up electronic copy of the Qualification Bid shall be only provided in the specific case indicated in Clause 4.4.3. For the avoidance of doubt, no de-encryption for the back-up electronic copy of the Qualification Bid shall be provided under any circumstances other that those indicated in Clause 4.4.3 (including prior to expiry of the Qualification Bids Submission Deadline).»,

գ. 4.1.1 կետի «seventy (70)» բառերը փոխարինել «thirty (30)» բառերով,

դ. 4.4.2 կետի (b) ենթակետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «The Evaluation Commission shall only open the encrypted email with

the back-up electronic version of the Qualification Bid submitted through the ARMEPS in case the Evaluation Commission is not able to open the original version of the Qualification Bid submitted through the ARMEPS for technical reasons relating to defaults in functionality of the ARMEPS at the session conducted under this Clause 4.4. In this case:

(a1) the Candidate shall immediately provide the secretary of the Evaluation Commission with de-encryption for access to the encrypted back-up electronic version of its Qualification Bid submitted through the ARMEPS; and

(b1) the back-up electronic version of the Qualification Bid contained in the encrypted email of a relevant Candidate shall be considered as the original version of the Qualification Bid submitted through the ARMEPS in further conduct of the Selection Procedure.»,

ե. «Annex 1. Data Sheet»-ի «Authorized Officials for the Purposes of Communication Related to Qualification Bids» տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ՝

«

Email address to submit a backup encrypted copy of the proposal in case of Qualification Bids intended for ARMEPS	passidppp@mia.gov.am

»,

զ. «Annex 1. Data Sheet»-ի «One (1) electronic copy in encrypted email» բառերը փոխարինել «One (1) electronic copy in encrypted email to be sent to the following address: passidppp@mia.gov.am» բառերով,

է. «Annex 1. Data Sheet»-ի «[Date, time and location to be added]» բառերը փոխարինել «12 April 2024, 16:00 (Yerevan Time), Yerevan» բառերով,

ը. «Annex 2. Estimated schedule»-ի «Announcement Date + 70 days» բառերը փոխարինել «Announcement Date + 30 days» բառերով,

թ. «Annex 3. Key provisions of the project»-ի Table A աղյուսակի «Projected quantity (10-year operational phase)» բառերը փոխարինել «Projected quantity (11-year operational phase)» բառերով,

ժ. «Annex 5. Qualification criteria»-ի 2.1 կետի (c) ենթակետի «European regulation» բառերը փոխարինել «international standards» բառերով,

ժա. «Annex 6. Content of qualification Bid»-ի 1.1 կետի (e) և (f) ենթակետերի «thirty (30) days» բառերը փոխարինել «sixty (60) days» բառերով,

ժբ. «Annex 6. Content of qualification Bid»-ի 1.2 կետի (e), (f) ենթակետերի «thirty (30) days» բառերը փոխարինել «sixty (60) days» բառերով, իսկ (e) ենթակետի «by the Candidate's secretary» բառերից հետո լրացնել «or other authorized person» բառերը,

ժգ. «Annex 6. Content of qualification Bid»-ի 1.3 կետի (e), (f), (h) և (i) ենթակետերի «thirty (30) days» բառերը փոխարինել «sixty (60) days» բառերով, իսկ (f) ենթակետի «by the Consortium Member's secretary» բառերից հետո լրացնել «or other authorized person» բառերը,

ժդ. «Annex 6. Content of qualification Bid»-ի «Form C» ձևաթղթի 4-րդ կետից հետո լրացնել 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

« 5. Certification about Related Companies

Where the Candidate / Lead Member has more than 10 Related Companies, such Candidate / Lead Member may complete this Form C as follows:

- indicate the total number of Related Companies in this Form C;
- provide the required information in this Form C about up to 10 most significant Related Companies (i.e., are considered most significant Related Companies in which the Candidate / Lead Member has at least 50%+1 voting rights);
- attach an affidavit to this Form C (as per Form C1) confirming that none of the Related Companies of such Candidate / Lead Member is involved in participation in the Selection Procedure in breach of the requirements of this RFQ.

For the avoidance of doubt, Form C should be still completed in this case, with an indication of all other information required herein.»,

ժե. «Annex 6. Content of qualification Bid»-ը լրացնել նոր «Form C1» ձևաթղթով՝ համաձայն հավելված 2-ի,

ժզ. «Annex 6. Content of qualification Bid»-ում 1.2 կետի (e) ենթակետի և 1.3 կետի (f) ենթակետի վերաբերյալ լրացնել հետևյալ նույն ծանոթագրությունը. «**Notification:** A document confirming good legal standing refers to an official document issued with respect

to a legal entity, which confirms that such entity exists and is legally allowed to do business in its relevant jurisdiction. The specific contents, form and the procedure for issuance of this document may vary depending on applicable regulatory requirements of each domicile. Good standing documents are typically issued by the authorized public authorities of an entity's jurisdiction. Alternatively, a good standing document can also be issued by an entity's corporate secretary or other corporate body authorized to verify and confirm the good standing details of such entity.»,

ժէ. «Annex 6. Content of qualification Bid»-ի «Form C» ձևաթղթում 4-րդ կետի վերաբերյալ լրացնել հետևյալ ծանոթագրությունը. «**Notificiation:** It is possible to either provide one Form C for all consortium members, indicating the required information about the Lead Member and each relevant Consortium Member, or separate Form C for each Consortium member. In both cases, Form(s) C should be signed by the Lead Member, who should be authorized to submit the Qualification Bid and all documents being part of such Qualification Bid on behalf of the entire Consortium. Additional signatures from other Consortium Members may (but not necessarily should) be added to Form(s) C submitted by a Consortium.».

4) Որոշմամբ հաստատված հավելված 3.3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 3-ի.

5) Որոշմամբ հաստատված 6.1, 6.2, 6.3 հավելվածներում՝

ա. համապատասխանաբար «Armenuhi Harutyunyan Deputy Minister of Justice of the Republic of Armenia», «Արմենուհի Հարությունյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ», «Арменуи Арутюнян Заместитель министера юстиции Республики Армения» բառերը փոխարինել «Liana Tovmasyan – Adviser to the Minister of Justice of the Republic of Armenia», «Լիանա Թովմասյան – ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական», «Лиана Товмасян – советник министра юстиции Республики Армения» բառերով,

բ. 3-րդ տողերի (Secretary of the Committee), (հանձնաժողովի քարտուղար), (Секретарь Комитета) բառերը հանել,

գ. համապատասխանաբար լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ.

«Nelli Davtyan – Deputy Head of Migration and Citizenship Service of the Ministry of Interior of the Republic of Armenia (Secretary of the Committee)», «Նելլի Դավթյան – ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար)», «Нелли Давтян – Заместитель Руководителя службы миграции и гражданства Министерства внутренних дел Республики Армения (Секретарь Комитета)»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ